

## Ղիմադրության տեսություն

*Երկու խոսք հրատարակողի կողմից*

Այստեղ հրապարակվողը երկու անավարտ ձեռագրերի հատվածներն են, որոնք գրվել են ընդդիմադիր շրջանակներում մի ժամանակ որոշ չափով հայտնի հրապարակախոս Հրանտ Տեր-Աբրահամյանի կողմից՝ նրա վերջնական անհայտացումից մի փոքր առաջ: Անհայտացում, որը ոմանք բացատրում են հեղինակի անսպասելի վրա հասած հոգեկան խանգարմամբ (նրան տեսել են Թոխմախի գերեզմանոցում մայրամուտի ժամին աննպատակ թափառելիս), մյուսներն էլ՝ արդարադատության հետ նրա ենթադրյալ խնդիրներով, որոնցից խուսափելով նա փախչել է Արեւմտյան Պապուա՝ միանալով այդ երկրամասի ժողովրդի [այայթարին](#) ընդդեմ ինդոնեզիական տիրապետության:

Ինչեւէ, փորձել ենք փրկել այն ինչ մնացել է մեր սիրելի հեղինակից:

Ցավոք, նրա այս վերջին գրվածքները ոչ միայն չեն դիմանում քննադատությանը բովանդակության եւ [տրամաբանության](#) տեսակետից, այլեւ կրում են ակնհայտ անկման, հոգեկան անհագստության, պեսիմիզմի, դեկադենսի հետքեր: Բայց քանի որ սա հեղինակի յուրահատուկ ցտեսությունն է, ճիշտ ենք համարել հրապարակել այս տողերը՝ գրեթե առանց խմբագրման որպես նյութ ապագա քրեական գործի համար: Խմբագրել ենք միայն մի քանի հատված, որոնք կարող էին անցանկալի հետեւանքներ ունենալ նյութը հրապարակողի համար:

### Հեղինակային նախաբան

Ստորեւ ներկայացված նոթերիս նպատակներ են եղել. նախ՝ դիմադրություն առաջացնել ընթերցողի մեջ՝ հեղինակի եւ նրա գրածի նկատմամբ: Սկսվելով չհասկացվածությունից՝ ինչո՞ւ այդքան հեռվից ու այդքան վերացական, եւ աճելով շարադրանքի ընթացքում, ընթերցողի դիմադրությունը պետք է հասնի գագաթին տեքստի ավարտին մոտ:

Ես ուզում եմ առաջ բերել վրոդվմունք՝ այնպիսին ինչպիսին կլիներ 1880 թվականին ծնված անգլիացի մի ազնվական տատիկի արծագանքը Սլեյերի վաղ ավոբները լսելուց հետո: Ոչ թե որովհետեւ ես չեմ սիրում անգլիացի ազնվական տատիկներին՝ ես սիրում եմ նրանց ավելի քան որեւէ բան այս աշխարհում, այլ հենց նրա պատճառով, որ հավատում եմ նրանց բանականությանը, եւ գիտեմ, որ **վրոդվմունքն ընդամենը համաձայնության նշան է**՝ ավելի ուժեղ քան լռությունը: Վրոդվմունքը պաշտպանության ձեւ է՝ այն ժամանակ, երբ գիտես, որ այն ինչից վրոդվում ես՝ ճիշտ է, բայց չես ուզում կամ չես կարող խոստովանել դա: Ես կուզեմ ամայես **սասանել ընթերցողի հոգում հաստատված հասարակարգը**, որ նրան այլ ելք չմնա, քան հեղինակին «վառելու» ցանկությանն ապավինելը:

Նման կերպ **սասանված հասարակարգերն այլեւս երբեք չեն վերականգնվում** լիարժեքորեն՝ մեկ անգամ հավասարակշռությունից դուրս գալով, նրանք հետագայում մշտապես կրում են ճգնաժամի հետքերը, եւ իրականում կասկածի սերմը պետք է ցանած համարել, եւ բերքը, որը լինելու տարիներ անց, հավաքելու են անիծյալ հեղինակի սերունդները:

Երկրորդ՝ ես ուզում եմ հիշեցել ինքուրոյն, ոչնչից՝ առանց որեւէ ներքին հղման եւ նախապատմության, առանց որեւէ հիմքի եւ հենքի՝ մտածելու, ստեղծելու եւ հաստատելու կարողության մասին: Ուզում եմ հիշեցնել մտքի ինքնիշխանության մասին, որը պարտավոր չէ կրկնել ոչ մեկին եւ ոչինչը, նույնիսկ եւ առավել եւս՝ ինքն իրեն:

Վերջապես ես ուզում եմ **ահաբեկել**: Ես միշտ իմացել եմ, որ լավ գրելն ու լավ ահաբեկչական գործողությունը մոտ են իրար՝ էությանբ: Գրելն ու կրակելն իրենց բարձրագույն դրսեւորումներում նույնն են: Բայց իմ ահաբեկչության նպատակը վնաս բերելը չէ ինչ որ մեկին, ոչ էլ մի բան պահանջելը կամ, Աստված չանի, ինչ որ բանից բողոքելը, այլ միայն **ավելորդ քանդելը, մարդուն՝ մեն-մենակ թողնելը վտանգի առաջ, երբ նա ստիպված պետք է գործի ազատության մեջ՝ ինքնիշխան, համարձակ եւ քաջ**: Ահաբեկումը բերում է քաոսի, կայացած իրավիճակների պայթեցման, քարտեզի վերացման, եւ այդ քաոսում հնարավոր է դառնում իրական ազատությունը՝ ընտրության, մտքի, կողմնորոշման: Տրամաբանությունը՝ կազմակերպված, հետետղական միտքը ահաբեկչության լավագույն գործիքներից է, որովհետեւ **որեւէ աշխարհակալություն երբեք չի դիմանում բանական քննադատությանը**:

**Կա թույլատրված դիմադրություն, եւ կա՝ անթույլատրելի, նույնիսկ՝ անպատկերացնելի:**

Հանուն աշխարհակալության գերիշխանության ամրապնդման, նաեւ հանուն ամեն տվյալ մեծ տերության ազդեցության տարածման թույլատրելի է պայքարել, ընդդիմանալ, դիմադրել տեղական իշխանությունների՝ «բռնապետությունների» դեմ: Այդպես է եղել դարերի ընթացքում, եւ այդպես է՝ այսօր: Դեռեւս Բյուզանդական կայսրությունը քայքայում էր տեղական փոքր ինքնիշխանությունները «այլախոհների» միջոցով:

«Օրինակարգ», թույլատրված դիմադրությունը հիմնականում իրացվում է ամեն տվյալ տեղանքի «առաջադեմ դասակարգի» կողմից, որը տեղական մասնաճյուղն է համաշխարհային առաջադեմ դասակարգի, այսպես ասած՝ «**համաշխարհային մտավորականության**», եւ որն ավելի ներկայացնում է աշխարհակարգը, նաեւ՝ գաղափարապես ու նյութապես կապված է «աշխարհի» հետ, քան իր երկիրը: «Օրինակարգ» դիմադրությունը ճանաչելի է՝ աշխարհը լավն է եւ արդար, երկիրն է՝ վատ ու անարդար իր լռելյայն ենթադրվող կարգախոսով, իր կոնֆորմիստական դիրքով աշխարհակարգի նկատմամբ: Առաջադիմական խավն իր պայքարում կարող է օգտագործել տվյալ ժողովորդի իրական եւ արդար դժգոհությունը, բայց միշտ միայն շահարկելով այն եւ իր դասակարգային բնույթով իսկ ի գորու չլինելով այն բավարարել:

**Առաջադիմական խավն իրականում տվյալ երկրի իշխանությունից ավելի հզոր իշխանության՝** աշխարհակալության լիազոր ներկայացուցիչն է իրեն գգում տվյալ տարածքում եւ միայն այդ ուժով է իրացնում իր դիմադրությունը տեղական իշխանությանը: Դասակարգը կարող է եւ չգիտակցել իր իրական նպատակները, քանի որ նա միայն կույր եւ ավտոմատ գործիք է, ռոբոտ, որի գիտակցությունը ձեւավորված է տվյալ պահի իշխող գաղափարաբանությամբ եւ հիմնարար առասպելներով: Նա հանդես է գալիս ընդդեմ «նացիոնալիզմի», «օլիգարխիայի», «միլիտարիզմի», «կղերականության» եւ նման կարգախոսներով, որոնց իրական նպատակն ու բովանդակությունը **տեղական ինքնիշխանության չափի նվազումն է՝ հանուն աշխարհակալության կամ մոտակա մեծապետության ազդեցության տարածման, որոնց խանգարում են տեղական կառույցները, եթե դրանք համեմատաբար ինքնուրույն եւ ուժեղ են:** Առաջադիմական խավի դիմադրությունն իր խորքում գերպահպանողական է, քանի որ նրա հիմքը, լեգիտիմությունն ու սանկցիան համաշխարհային տիրապետության եւ մեծապետության պահպանումն ու ամրապնդումն է:

Նրբությունն այն է, որ ցանկացած տեղական իշխանություն, եթե ուզում է գոյատևել պետք է ընդհանուր առմամբ ենթարկվի աշխարհակարգի կանոններին, միայն սահմանափակ չափի մաների դաշտ ունենալով: Նա կարող է ապահովել իրեն անկախության որոշակի չափ, միայն թույլատրելի սահմաններում «խաբելով», «զցելով», «խորամանկելով»: Առաջադիմական դասակարգի գործը նախ նման խորամանկությունների, մանր խախտումների բացահայտումն է, մատնությունը եւ բարձրաձայնումը: Երկրորդ՝ ժողովորդական բազային դժգոհությունը, որը որպես կանոն բխում է տվյալ աշխարհակարգին բնորոշ գծերից, օրինակ, այսօրվա կարգում՝ լիբերալ տնտեսությունից, դեխնդուստրիալիզացիայից եւ այլն, «դասակարգը» պետք է մեկնաբանի եւ ուղղորդի այնպես, որ դրանք որեւէ կապ չունենան աշխարհակարգի հետ, եւ միշտ բխեն միմիայն տեղանքի առանձնահատկություններից:

Այս դիմադրության անունից եւ այս դիմադրության մասին շատերը ձեզ կպատմեն, եւ կսովորեցնեն լինել «պայքարող», «ազատատենչ», «այլախոհ», այսինքն՝ **աշխարհակարգի օրինակելի եւ առաջնագիծ զինվորներ՝ լավ պիոներներ:** Բայց իրական դիմադրությունն այդքան հեշտ ու էժան չի կարող լինել, ոչ էլ՝ խմբային կամ դասակարգային, այն էլ հանուն՝ «հայտնի» ճշմարտությունների ու հզոր թիկունքով: Այդպես կռվել կարող են միայն ռեզուլյար բանակների ներկայացուցիչները: **Քարոզելով «դիմադրություն»՝ ձեզ ընդամենը անդամագրելու են կանոնավոր բանակներից մեկի տեղական ստորաբաժանում, դառնալու եք այսինչ Հռոմեական լեգիոնի զինվոր, իսկ մի լավ օր գուցե՝ ցենտուրիոն:**

**Կա դիմադրության անթույլատրելի, նույնիսկ՝ անպատկերացնելի:** Այսօրվա աշխարհակարգում, ուր գնալով ավելի ու ավելի նեղ են դառնում քննարկելի, վիճելի, հարցականի սահմանները, ուր ավելի ու ավելի շատ ընդհանուր ճշմարտություններ հաստատվում են որպես արքիոմատիկ ու անքննելի, իրական դիմադրությունը, այլընտրանքը ոչ թե անթույլատրելի է կամ լուսանցքային, այլ պարզապես՝ անպատկերացնելի, անասելի,

սթափ բանականության մեջ լինելով՝ անձեակերպելի ու անհավատալի, ինչպես, Ջեյմս պաշտամունքի վերականգնման փորձը միջնադարյան Հռոմում: Տեսակետների իրական բազմազանության եւ մրցակցության, գիտական մտածողության աստիճանական հաղթանակի դարաշարժաններն, ինչպիսիք եղել են, օրինակ, նախորդ երկու դարերն, այսօր իրենց մթնոլորտով մեզնից այնքան հեռու են որքան Հոմերոսի հերոսների գեղեցիկ, բայց անհասկանալի աշխարհը: Միայն ինքնահոսով շարունակում ենք համարել մեզ ազատության, բանականության, նույնիսկ՝ հեղափոխության դարաշրջան, իրականում լինելով պատմության առավել կրոնականացված եւ պահպանողական էպոխաներից:

Կրոնը Աստծուն հավատալը չէ՝ կրոնն ընդհանրապես հավատքն է: Չափի մեջ հավատքն անհրաժեշտություն է մարդու համար: Բայց կան ժամանակներ, երբ հավատալու բաները չափից ավելի շատանում են, եւ Հավատքը դուրս գալով իր սահմաններից, հավակնում է գրավել նաեւ այն ոլորտները, որոնք իրենը չեն: Մեր այսօրն այդպիսին է: Մենք նույնիսկ հավատում ենք, որ վերջապես գտել ենք լավագույն հասարակարգը՝ բոլոր ժամանակների եւ տեղերի համար: Որեւէ հիմնարար արժեք այսօր հարցականի տակ դնելու չէ այլեւս՝ քննարկելին միայն երկրողական երանգներն են: Այդպես չի եղել երեկ կամ նախորդ օրը՝ մեր հայրերի, պապերի ու նրանց հայրերի ժամանակ, նաեւ՝ նրանցից առաջ, քանի որ եթե միջնադարում իսկ կրոնականացվել է երկինքը, ապա երկրային իրողությունները՝ միայն նվազ չափով: Բայց **աշխարհիկ կրոնի էությունը հենց երկրայինն՝ առավել փոփոխականի կրոնականացումն է**, սրբացումը, հավատքի, ոչ թե գիտության առարկա դարձնելն է: Դրանով աշխարհիկ կրոններն ունեն միայն իրենց հատուկ մոլերանդության աստիճան:

Որեւէ աշխարհակալությանը, որեւէ Հռոմեական խաղաղությանը դիմադրողներն ու հաղթողները միշտ եղել են **ազգերը**: Ազգայնականությունը դրա համար էլ աշխարհակալության կողմից առավել նգովյալ ու դիվականացված գաղափարաբանությունն է, որովհետեւ նրա մեջ է թաքնված իրական ազատության գաղտնիքը: Միայն բացառիկ անհատները կարող են հասնել իրական ազատության: Բայց մարդկանց ճնշող մեծամասնությունը կարող է ապահովել իրեն իրապես ինքնիշխան կյանք միայն ազգային ինքնակազմակերպման միջոցով: Դրա համար ինքնին անհատի ազատությունը, որը քարոզվել եւ քարոզվում է կայսերական, աշխարհակալ ուժերի կողմից գործնականում նշանակում է աշխարհակալության ազատություն՝ իշխելու եւ վերահսկելու «տեղանքները»:

**Իրական դիմադրությունը միայն ազգային կարող է լինել**: Ազգայինը պիտակավորվում է որպես այլատյացություն, իսկ իրականության մեջ **ազգային նշանակում է՝ ոչ թե մեկ, այլ բազում ճշմարտություններ**, ոչ թե մեկ, այլ բազում տեսակետներ, ոչ թե մեկ, այլ բազում իշխանություններ, ոչ թե մեկ, այլ բազում սկզբունքներ: **Ազգային դիմադրություն նշանակում է, որ մարդկանց ամեն տվյալ, տեղական խումբ ազատ է պաշտելու իր աստվածներին, ունենալ եւ փորձել իր ճանապարհը, լինել իր հարստության տերը**: Բայց բոլոր ազգերը միասին ունեն մեկ ընդհանուր շահ՝ հաստատել իրենց անհատականությունն ընդդեմ «Կաթոլիկ» եւ «Ուղղափառ» աշխարհակալության, ընդդեմ Հռոմեական ծավալման, որը խոստանալով ազատություն եւ խաղաղություն, ստրկացնում է, մասնատում եւ ստեղծում հոգեւոր դատարկություն:

## Դիմադրության տեսություն. ազգային դիմադրության նախահիմքեր

### Միջավայրի դիմադրությունը եւ դիմադրությունը միջավայրին

1. Դիմադրությունն ընդհանրապես արտակարգ վիճակ չէ, այլ որեւէ գոյության լինելու բնական եւ մշտական կերպ:

Որեւէ գոյություն ինքնին դիմադրություն է: Լինի դա ճամփեզրին զցած քար, աստեղային համակարգի անդամ՝ աստղ կամ մոլորակ, կենդանի որեւէ էակ կամ հանրային որեւէ ենթակա (սուբյեկտ)՝ պետություն, ազգ, դասակարգ եւ այլն՝ իր գոյությունը պահելու, հաստատելու եւ տարածելու համար այն պետք է մի կողմից անընդատ հարմարվի՝ դիմադրի արտաքին միջավայրի

ազդեցություններին, մյուս կողմից՝ պահպանի իր ներքին միասնությունը՝ բաղկացուցիչ տարրերի փոխշահավետ հարաբերությունը եւ հավասարակշռությունը:

**Հնարավոր չէ հենց այնպես լինել, «մնալ»՝ լինելը ուժի դրսևորում է, ուժի ծախս, եւ ուժերի պայքար:**

**Հավելում:** Թվում է, թե ձեւակերպումը չափազանցություն է անկենդան բնության նկատմամբ: Սակայն բավական է մակերեսորեն իսկ դիտարկել, օրինակ, ցանկացած աստեղային համակարգ համոզվելու համար, որ «անկենդան բնությունը» հեռու է հավետ կայուն հոմեոստազիսի «երջանկությունից»: Ցանկացած երկնային մարմին ենթակա է մյուսների ձգողական ուժերի ազդեցությանը, որոնց հավասարակշռմամբ հաստատում է իր տեղը համակարգում: Այդ տեղը մի կողմից կայուն է թվում, սակայն, ցանկացած պահի կարող է խախտվել, եթե արտաքին ազդեցությունների ուղղությունը կամ ուժը փոխվում է: Մյուս կողմից՝ ցանկացած երկնային մարմին պետք է վերահսկի իր անմիջական միջավայրը, իր ձգողական ուժով գերակայի իր տարածքում, որպեսզի կայուն ու տեւական գոյություն ապահովի իր համար: Վերջապես նա անընդատ ներքին «պայքարի» մեջ է՝ ամեն տվյալ վայրկյանին որոշակի ներուժ (էներգիա) ծախսելով իր ներքին տարրերի միասնությունը պահպանելու համար:

**Հավելում 2.** Թվում է թե դիմադրության հարցի դիտարկման սկզբնավորումը այսքան «հեռվից» ավելորդություն է: Դա հետեւանք է հանրային երեսույթների իմաստավորման մեջ չհաղթահարված եւ չզիտակցված «աստվածաբանության» գերակայության: Ըստ այդմ, լռելյայն, բայց հստակ սահման է դրվում մարդկայինի՝ հանրայինի, պատմականի եւ բնության՝ «հոգու» եւ «նյութի» միջեւ: Իբր մարդկային երեսույթները բացատրելի են միայն իրենք իրենցից՝ որպես մաքուր ոգու եւ բանականության դրսևորումներ, իսկ մյուս կողմից՝ բնությունը մաքուր նյութ է՝ զուրկ հոգուց եւ բանականությունից:

2. Որեւէ ենթակա կայանում է, գոյատեւում է եւ հաստատվում է **միջավայրի դիմադրության** պայմաններում: Միջավայրի դիմադրության հաղթահարումը ենթակայի կողմից իր հերթին **դիմադրություն է միջավայրին:**

Այդու՝ առկա է երկկողմանի եւ երկուստեկ՝ ենթակա-միջավայր դիմադրական համակարգ:

3. Ենթակայի դիմադրության կառուցվածքը իր հերթին երկշերտ է՝ մի կողմից **հարմարվել** միջավայրին, մյուս կողմից՝ **հարմարեցնել** միջավայրը:

Հարմարումը միջավայրին

4. Հարմարումը միջավայրին՝ ենթակայի կողմից միջավայրի դիմադրության հաղթահարումն է առավել անհատականացմամբ, «նեղ մասնագիտացմամբ», **առավելագույն յուրահատկությունների ձեռք բերմամբ:** Այսպիսով, ենթական ձեւավորվում է իր միջավայրի կողմից:

**Հավելում:** Սրա լավագույն եւ պարզ օրինակները տալիս է կենդանական աշխարհը: Այսպես, բեւեռային արջի յուրահատկությունն է սպիտակ մորթին՝ հարմարում հյուսիսային ձնածածկ բնապատկերին, ցանկացած ջրային ողնաշարավոր՝ սողուն, կաթնասուն, թռչուն ձեռք է բերում սահուն մարմին եւ լողակներ՝ նմանվելով ձկներին, ցանկացած թռչող կենդանու մարմինը ձգվում է՝ երկարում եւ նեղանում՝ հարմարվելու համար թռիչքի ժամանակ օդի դիմադրությանը եւ այլն: Սակայն մարդկային հանրույթների պատմությունը նույնպես լի է՝ առավելագույն անհատականացմամբ հարմարման օրինակներով, որոնց կանդրադառնանք հետագա շարադրանքում:

**5. Հարմարումը միջավայրին հակասական է ինքն իր մեջ.** չափազանց ավելի յուրահատուկն ու չափազանց ավելի մասնագիտացածը, որը մի կողմից առավել հարմարեցվածն է միջավայրին ամեն տվյալ ժամանակահատվածում, մյուս կողմից՝ նաեւ առավել խոցելին է տեսականության մեջ, քանի որ **միջավայրի փոփոխությամբ առավել յուրահատուկը կորցնում է իր առավելությունը եւ բնաջնջվում:**

**Հավելում:** Կյանքի ողջ պատմությունը բաղկացած է կենդանատեսակների ծաղկման, զարգացման, բազմազանացման եւ մյուս կողմից վերացման փուլերից: Եթե համակարգի կայունացման փուլերում առավել առանձնհատակություններ ձեռք բերած տեսակներն առավել հաջողակն են, ապա համակարգի կտրուկ փոփոխության փուլերում առավել կենսունակ եւ նոր համակարգերի հիմք են դառնում առավել «գորշ», չանհատականացված տեսակները: Համեմատիր օրինակ՝ Պալեոզոյի եւ Մեզոզոյի, ապա Մեզոզոյի-Կայնոզոյի սահմաններին տեղի ունեցած մեծ վերացումների պատմությունը:

**Հավելում 2. Հատուկ ենք բնական պատմության այս տվյալները ներառնում շարադրանքի մեջ,** որպեսզի շեշտենք մեր այն միտքը, որ մարդկային ուսումնասիրությունը ոչ միայն հնարավոր չէ, այլեւ զավեշտալի է առանց դրա տեղադրման բնական պատմության մեծ շրջարկի մեջ, եւ մարդկային հանրության մասին որեւէ դատողություն, որը հաշվի չի առնում մարդու բնական պատմության մաս լինելը այլ բան չէ քան «աշխարհիկ աստվածաբանություն»:

**7. Եթե առավել յուրահատկության ձեռք բերումը ենթակայի կողմից միջավայրի դիմադրության հաղթահարման արդյունավետ զենքն է, ապա մյուս կողմից միջավայրի պատասխանն ու հակազենքն է՝ միջավայրի անընդատ փոփոխականությունը:**

Եթե մի կողմից ամեն տվյալ փուլում միջավայրը թվում է ենթակայի համեմատած առավել կայուն եւ անփոփոխ, ապա մյուս կողմից՝ տեսականության մեջ անձանաչելիորեն եւ արմատապես փոփոխելի է ցանկացած միջավայր:

**Հավելում:** Մարդը սովոր է կայունություն փնտրել միջավայրում, հատկապես՝ բնության մեջ: Եթե անհատի կյանքը թվում է լի անկանախատեսելի փոփոխություններով, եթե պետությունների ու ազգերի գոյությունը թեւեւ ավելի կայուն է թվում քան անհատինը, բայց միեւնոյն է կարող է ենթակա լինել արմատական վայրիվերումների նույնիսկ մեկ անհատի կյանքի ըթնացքում, ապա մի բան որ այս ամենի համեմատ թվում է հավետ ու անփոփոխ բնական միջավայրերն են՝ աշխարհագրական լանդշաֆտները, կենդանական տեսակների վերարտադրությունը, լուսատուների եւ աստղերի պտույտը, բնական ցիկլերը՝ օրվա ու գիշերվա տեսականությունը, տարվա եղականների հերթագայությունը եւ այլն: Պոետները գովերգում են ճերմակաձյուն գազաթներն՝ առանց պատկերացելու կամ նույնիսկ իմանալու, որ որքան ավելի բարձր ու արտահայտիչ է որեւէ լեռ, այնքան ավելի համեմատաբար երիտասարդ է այն կամ, որ հանգած հրաբուխների բարձրադիր որեւէ լանդշաֆտ վկայում է, որ երկրաբանորեն ոչ վաղ անցյալում այս նույն տեղում եղել է ալեկոծ օվկիանոս:

Շնից միշտ շուն է ծնվում, եւ ոչ կատու եւ այդպես հազարմյակներ շարունակ, բայց շան ու կատվի նախնին նույնն է, եւ ուրեմն մի ժամանակ շնից կատու է ծնվել եւ կատվից շուն: Օրվա երկարությունը աննշան, աննկատ քանակով կրճատվում է ամեն օր (երկու միլիվայրկյան ամեն 100 տարվա մեջ), որովհետեւ Երկրագնդն աստիճանաբար դանդաղեցնում է իր շարժումը, եւ օրվա տեսականությունը երկարում է՝ երբ կես միլիարդ տարի առաջ ծնվում էր բազմաբջիջ կյանքը, ապա օրվա տեւողությունը 20 ժամ էր:

**Բնական միջավայրի հենց այս երկարաժամկետ փոփոխականությունն է, որ ստիպելով հարմարվել իրեն, անհրաժեշտ է դարձնում ենթակաների զարգացումը եւ բազմազանացումը:**

Ինչ վերաբերում է բուն մարդկային պատմության՝ պետությունների, ազգերի, մշակույթների, հասարակարգերի փոփոխականությանը, ապա այն թվում է ավելի ակնհայտ, քանի որ առնվազն տեսականորեն, իսկ որոշ սերունդներ՝ սեփական փորձից գիտեն, որ ոչինչ հավերժ չէ «այս աշխարհում»: Սակայն նույնիսկ այն դեպքերում, երբ պատմական փոփոխականությունը

սեփական կյանքի փորձն է, դա առավել հաճախ չի նշանակում փոփոխականության կենդանի վերապրում, այլ ավելի շուտ վերացական գիտելիք: Չնայած ե՛լ տեսությունը, ե՛լ փորձը հաստատում են ցանկացած մարդկային կարգի ժամանակավորությանը եւ հարաբերականությանը, միեւնույնն է **ամեն տվյալ կարգ ձգտում է հաստատել իրեն որպես հավերժ, որպես վերջապես ճիշտ ձեւերը գտած եւ որպես անվերջ շարունակվող դեպի ապագա՝ հիմնական գծերում անփոփոխելի:**

Մարդկային պատեկրացումը ապագայի մասին որպես կանոն ուղղակի պրոյեկտում է ներկայի կարգի դեպի առաջ՝ զուտ քանակական հավելումներով բայց բոլոր հիմնական միտումների պահպանմամբ, չնայած նրան, որ չկա ավելի պարզ ճշմարտություն, որ նման մոտեցումն ապագային երաշխավորված սխալ է: Այն ինչ այսօր թվում է հավերժ, ճշմարիտ եւ ինքնին պարզ, վաղն անպայմանորեն ընկալվելու է որպես անկատար, սխալ եւ ապաբանական, եւ այս կանոնից չկա եւ չի կարող լինել որեւէ բացառություն:

8. Միջավայրի փոփոխականությունը ոչ միայն պարզապես բարդեցնում է դիմադրության խնդիրը, այլեւ դարձնում է այն մշտական անհրաժեշտություն, անընդատ գործունեություն ի պատասխան նոր փոփոխությունների: **Միջավայրի փոփոխականությունը պարտադրում է, որ հարմարումը միջավայրին լուծի միաժամանակ երկու հակադիր խնդիր՝** մի կողմից վերը նշված առավելագույն յուրահատկության ձեռքբերմամբ եւ նեղ մասնագիտացմամբ հարմարվել է միջավայրի առկա, կայուն վիճակին, եւ մյուս կողմից յուրահակտությանը հակադիր՝ առավել ձկունությամբ հարմարվել միջավայրի փոփոխականությանը, այսինքն՝ միջավայրի հնարավոր ապագային:

9. ձկունության մարտավարությունն առավել բարդ է, քանի որ այն ի տարբերություն յուրահատկության պետք է պատասխանի միջավայրի ոչ թե առկա, այլ ապագա, հետեւաբար՝ անկանխատեսելի վիճակների: Եթե ներկան մեկն է, ապա ապագան անթիվ հնարավորություններ են, որոնից, սակայն, միայն մեկը կարող է իրականանալ: Այդու՝ դիմադրության ձկուն համակարգը պետք է ի գորու լինի պատասխանել միաժամանակ բազում մարտահրավերների, որով **ձկուն համակարգը պետք է աշխատի ավելցուկով:** Մյուս կողմից, քանի որ մեկ ենթական չի կարող հասնել այնպիսի ձկունության, որ ի գորու լինի հարմարվել միջավայրի ցանկացած փոփոխությանը, ապա այստեղ ի հայտ է գալիս նաեւ ճակատագրի, բախտի գործոնը՝ շահում է նա, ով պատահականորեն, բախտի բերմամբ, կանխել է հենց այն հատկությունը, որը հարմար է միջավայրի փոփոխության բազում տարբերակներից՝ հենց իրականություն դարձածին: Սա աստվածների միջամտությունն է կամ օրակույլն է:

10. Միջավայրին դիմադրության առավել արդյունավետ համակարգն, այդու, պետք է պահպանի **կշռույթը (բալանսը) երկու հակադիր բեւեռների՝ յուրահատկության եւ ձկունության միջեւ:**

ձկունությունը որպես հակադիր յուրահատկությանը՝ ընդհանրությունն է, անհատականության պակասը, չտարբերակվածությունը, հնարավորությունների ներուժը, «լայն մասնագիտացումը»: ձկունությունը ենթակայի փոփոխականությունն է՝ ի պատասխանն արտաքին միջավայրի փոփոխականությանը:

**11. Ճկունությունն նույնպես ինքնահակասական է:** Ղա մի կողմից առավել ընդհանրություն է՝ հակադրված յուրահատկության, միջակությունն է, գորշությունն է, մյուս կողմից ներքին առավել բազմազանությունն է՝ հակադրված առավել յուրահատկության միակերպությանը եւ նեղ մասնագիտացմանը:

**Հավելում:** Մեկ՝ գորշ գայլ տեսակից, միջավայրի փոփոխությամբ՝ տվյալ դեպքում մարդու միջամտությամբ ստացվել է շուն տեսակի ողջ բազմազանությունը: Ղա նշանակում է, որ այս ամբողջ բազմազանությունը թաքնված էր որպես ներուժ արդեն գայլ տեսակի մեջ: Այս հակասությունը՝ առավելագույն բազմազանությունը մեկ տեսակի մեջ՝ ծագած մեկ այլ միակերպ տեսակից կարող էր անհավատալի եւ անտանելի թվալ, եթե չլիներ սովորական, բոլորիս ծանոթ իրականություն: Սակայն այն ինչ մարդու միջամտությամբ տեղի է ունեցել շան հետ կարճ ժամկետում, ավելի տեսական ժամանակի մեջ բնական զարգացման սովորական ընթացքն է: Կենդանական աշխարհի ողջ բազմազանությունը ծագել է հենց նման կերպով: Եթե ի զորու լինենք մի օր կենդանի վերապրել, այլ ոչ թե զուտ վերացականորեն պատկերացնել, որ ոչ միայն մուկն ու փիղը ծագմամբ նույն կենդանին են՝ զարգացած տարբեր միջավայրերում տարբեր ուղիներով, այլեւ, օրինակ, ճանճի եւ մարդու կառուցվածքային տարբերությունն ի վերջո այդքան մեծ չէ, որքան մեզ թվում է, այդ ժամանակ միայն կկարողանանք համարժեք չափմամբ մոտենալ կյանքի եւ հանրության «մեծ հարցերին», անհրաժեշտ հեռավորությունից դիտարկել ինքներս մեզ եւ այն ամենն ինչ հավիտյանն ու հիմնարար ենք համարում մեր ներսում եւ մեր շուրջը:

**12. Միջավայրին հարմարման, նրա դիմադրության հաղթահարման կշռույթը կարող ենք կոչել կենսունակության աստիճան, որն, ինչպես տեսանք ինքն իր մեջ երկատված, հակասական հղացք է՝ կենսունակը պետք է ձգտի առավել յուրահատկության, եւ միաժամանակ առավել ընդհանրության, պետք է լինի առավել միակերպ ու միասնական եւ միաժամանակ առավել բազմակերպ, նույնիսկ՝ բազմադիմի, հարմարվի միջավայրի ներկային, բայց պատրաստ լինի միջավայրի անկանխատեսելի ապագային:**

### Միջավայրի հարմարեցումը

**13. Ենթակայի ներքին փոփոխականությունը՝ ճկունությունն ի պատասխան միջավայրի փոփոխականության, միակ հնարավոր տարբերակը չէ:** Պատասխանի մյուս տարբերակը՝ միջավայրի փոփոխությունը հենց ենթակայի կողմից: Քանի որ միջավայրն իր բնույթով փոփոխական է, ապա այն կարող է ոչ միայն ինքնին փոփոխվել, այլեւ ենթարկվել փոփոխության՝ արտաքին միջամտությամբ:

Այստեղից բխում է միջավայրի դիմադրության հաղթահարման մյուս կերպը՝ **միջավայրի՝ ներգործուն հարմարեցումը** ենթակայի կողմից՝ ի հակադրություն ենթակայի կրավորական հարմարմանը միջավայրին: Սա նախ մարդուն բնորոշ մարտավարություն է, եւ այստեղից սկսվում է մշակույթը, քաղաքականությունը եւ պատմությունը:

**14. Միջավայրի հարմարեցումը լայն իմաստով միջավայրի մշակումն է՝ մշակույթն է:** Այս լայն սահմանմամբ մշակույթն ընդգրկում է ողջ յուրահատուկ

մարդկայինը՝ այն ինչ մարդուն տարբերում է մնացած կենդանի աշխարհից, մարդու ստեղծած **երկրորդ բնությունը**, որը, սակայն, ոչ թե բացարձակ հակադիր է «առաջին բնությանը», այլ՝ դրա հետ միեւնույն կանոններին ենթակա:

**Հավելում:** Հակառակ դեռ Արիստոտելից եկած սահմանման մարդը բանականության բացառիկ կրողը չէ: Մարդկային բանականությունը որակական նոր փուլ, թռիչք չէ, այլ շարունակությունն ու զարգացումը նախամարդկայինի: Բանական է նյարդային համակարգով օժտված ցանկացած կենդանի էակ: Բանականությունը ոչ թե բնության եւ մարդկության կենտրոնական շարժի գործոնն է, այլ ընդմենը դրսևորումը եւ գործիքը դիմադրության եւ հարմարման միջավայրին: Բանականության, այսինքն՝ նյարդային համակարգի ծագումը ամենեւին էլ խրատատու պատմություն չէ: Կենդանի աշխարհում բանականությունից զուրկ են բույսերը, քանի որ նրանք ի զորու են ապահովել իրենց կյանքը անմիջապես արեւային ներուժի յուրացմամբ: Սա կյանքի համեմատաբար ինքնամփոփ, խաղաղ, «արքայական» կերպն է: Բանականության անհրաժեշտությունը ծագում է այն ժամանակ, երբ կյանքն ինքն իրեն պահելու համար պետք է կլանի այլ կյանք՝ այսինքն՝ երբ նա պետք է սեփականացնի ուրիշի կողմից յուրացված եւ կյանքի վերացված ներուժը: Այս ուղու վրա սկզբից ծագում են բուսակերները, եւ ապա՝ գիշատիչները, որոնք իրենց հերթին ուտում են բուսակերներներին: Բանականությունը ծագում է որպես այլ կենդանի էակին գտնելու, բռնելու, ուտելու՝ որսի գործիք, ապա նաեւ մյուս կողմից՝ որպես հարձակումից պաշտպավելու գործիք:

15. Մշակույթը նախ ներգործուն հարաբերությունն է միջավայրի հետ՝ միջավայրի դիմադրության հաղթահարումը միջավայրի փոփոխության միջոցով:

Այստեղ ենթակայի հարմարումը միջավայրին դրսևորվում է որպես իր հակադիր՝ միջավայրի հարմարեցում ենթակային՝ միջավայրի այնպիսի փոփոխություն, որը միջավայրն առավալ հարմար՝ անվտանգ եւ շահավետ պետք է դարձնի ենթակայի համար:

Իր բացարձակ միտման մեջ մշակույթը միջավայրի դեմ պատերազմ է, չսահմանափակվալ ազդեսիա՝ ենթակայի կամքի պարտադրմամբ՝ միջավայրը ենթարկելու, հպատակեցնելու, ծառայեցնելու նպատակով: Այս բացարձակ միտման կատարելիությունն է միջավայրի ի սպառ չեզոքացումը, նրա դիմադրության ի սպառ հաղթահարումը, միջավայրի վերածումը կրավորական առարկայի: Ինչպես ցանկացած բացարձակ միտում, սա էլ, սակայն երբեք իրագործելի չէ, եւ հակասական է ինքն իր մեջ:

**Հավելում:** Մեր քննության մեթոդը ենթադրում է ոչ թե «դատողություն», այլ նկարագրություն, ոչ թե լավ ու վատի կամ «պետք է լինի այսպես»-ի, այլ «ինչպես է»-ի ներկայացում: «Միամիտ», անմիջական գիտակցության մեջ, որը սովոր է «դատողական»՝ գնահատական մոտեցումների նման մեթոդը սովորաբար դիսոնանս է առաջ բերում՝ նրան թվում է, որ փաստի արձանագրումը հավասար է դրա «արդարացմանը», իսկ փաստի ժխտումը՝ «դատապարտմանը»: Նրան ընդհանրապես հետաքրքիր է միայն «գնահատականը»՝ «լավ բաները» պետք է հաստատվեն, իսկ վատերը՝ հերքվեն: Մոտեցում, համաձայն որի «արդարացնելը» կամ «դատապարտելը» դիտարկման գլխավոր տարրը չեն, եւ հիմնական խնդիրը՝ նկարագրելն ու հասկանալն է, ընդհանրապես պատկերացնելի չէ մաքուր «դատողական» ընկալման համար, որը որպես որեւէ քննության գազաթի, եզրահանգման, հանգուցալուծման սպասում է գնահատականի, նաեւ՝ լավ բաների ճշմարտացիության հերթական՝ ծիսական հաստատման:

Եթե բնագիտությունը վաղուց ի վեր կարողացել է անցնել «գնահատումից»՝ գիտության՝ նկարագրելուն եւ հասկանալուն, ապա մարդագիտությունը նախորդ երկու դարերի բամաթիվ փորձերց հետո, այսօր առավել քան երբեւէ վերադարձել է մաքուր աշխարհիկ աստվածաբանությանը՝ գիտելքը մարդու մասին, եթե արգելված չէ իր կիրառարակ առումներում, ապա իր վերին հարկերում կառուցվում է բացառապես «դատողությունների»

շուրջ՝ ինչպիսին պետք է լինի մարդը, հանրությունը, պետությունը, այլ ոչ թե ինչպիսին ինքը է՝ իր իրական դրսեւորումներում: Փորձնական գիտությունը մարդու՝ պատմության, հասարակության, մշակույթի մասին կասկածյալի աթոռին է որպես «անբարոյականության» պոտենցիալ աղբյուր եւ իշխող կարգի դեմ հնարավոր ոտնձգություն, ավելին՝ դրա հնարավորությունն իսկ գրեթե ի սպառ մոռացված է: Մարդու մասին պետք է ոչ թե իմանալ նորույթներ, այլ վերահաստատել «հայտնի ճշմարտությունները»:

16. Միջավայրի առավել հաջողակ հարմարեցումը ենթադրում է միջավայրի առավելագույն ճանաչում, նրա թաքնված ներուժի եւ յուրահատկությունների բացահայտում, նրա «հարստության» «պեղում»: Այդու, հակասական կերպով, «ագրեսիան» միջավայրի նկատմամբ բացահայտվում է որպես գիտություն միջավայրի մասին: Միջավայրն առարկայի վերածելու բացարձակ միտումը հանգեցնում է միջավայրի յուրահատկությունների ճանաչմանը, որով միջավայրի վերածմանը ենթակայի՝ կենդանի գործող անձի, անհատականության: **Այստեղ բացահայտվում է մշակութայինի ներքին հակասությունը՝** միջավայրի նկատմամբ առավել ներգործունը, առավել ագրեսիվը, առավել հաշվի չառնողը, միաժամանակ միջավայրի նկատմամբ առավել ուշադիրն է, առավել «մեղմը», առավել հաշվի առնողը:

17. Միջավայրի ճանաչումը, նրա յուրահատկությունների եւ ներուժի բացահայտումը՝ նրա աննհատականացումը եւ ենթակայի վերածումը նշանակում է միջավայրին հարմարվելու առավելագույն չափ: Հետեւաբար, հակասաբար՝ միջավայրի հարմարեցումը՝ նրա փոփոխմանն ուղված գործունեությունը հանուն ենթակայի շահերի, բացվում է որպես առավել հարմարում միջավայրին ենթակայի կողմից: Եթե հարմարեցումն ի սկզբանե է՛ր հարմարման մարտավարություններից մեկը, ապա այստեղ հարմարեցումն արդեն հարմարման առավելագույն չափն է:

18. Միջավայրի ճանաչումը, նրա հետազոտումը՝ ենթակայի շահերից ելնելով, միջավայրի բացահայտված առանձնահատկությունների առավել հաշվի առնելը նշանակում է նվազագույն դիմադրության ճանապարհով միջավայրին հարմարվելու հնարավորություն: Այդու՝ անցումը կրավորական հարմարվելուց դեպի ներգործուն համարեցումը, որն ի սկզբանե բացահայտվում է որպես միջավայրի դիմադրության հաղթահարման եւ ենթակայի դիմադրության առավել «ագրեսիվ», պատերազմող մարտավարություն այստեղ հակասորեն բացահայտվում է որպես նվազագույն դիմադրություն, նվազագույն ջանք, խաղաղություն եւ «սեր»՝ երկուսի միություն:

19. Ենթական եւ միջավայրը փոխներթափանցում են իրար մեջ՝ ձեւավորելով նոր միասնական համակարգ: Այստեղ արդեն առկա է ոչ թե ենթակայի եւ միջավայրի պարզ փոխհարաբերություն, ուր երկուսն ազդում են միմյանց վրա կամ դիմադրում են միմյանց՝ պահպանելով այդ հարաբերության մեջ յուրաքանչյուրն իր առանձնությունը, այլ հարաբերության այնպիսի սերտացում, ուր մեկը ոչ միայն ազդում եւ դիմադրում է մյուսին, այլ պայմանավորվում եւ ձեւակերպվում է մյուսի կողմից, ուր կողմերից յուրաքանչյուրը ձեռք է բերում մյուսի որակները՝ ընդհուպ մինչեւ տեղափոխում՝ ենթական միջավայրանում է,

դառնում է միջավայրի ինքնության կրողը, իսկ միջավայրը ենթակայանում է դառնում է ներգործող անհատականություն:

**20. Միջավայրն անհատականում է, դառնում է եզակի անհատականության կրող երկիր,** որը որպես իր անհատականության մաս կրում է ոչ միայն բնական, այլև մարդու կողմից ստեղծված, ձեւավորված տարրերն ու որակները, դառնում է ենթակայի հայրենիք: Մյուս կողմից ենթական դառնում է միջավայրի՝ երկրի ներայացուցիչ, արտահայտիչ, իր ինքնությունը կառուցում է միջավայրի հետ կապի միջոցով՝ այս ինչ երկրի բնակիչ, քաղաքացի, այսինչերկրացի: Միջավայրն ինքն է դառնում ենթակա, իսկ ենթական՝ առարկայական ուժի մարմնավորում:

**Հավելում:** Մարդու կողմից միջավայրի մշակումը մի քանի խորոշ փուլերով է անցնում: Անցումը երկրագործությանն ու անասնապահությանը ստեղծում է հայրենի միջավայրներ եւ դրանց հետ կապված ինքնություններ, մշակույթ եւ քաղաքակրթություն՝ մեզ ավելի հասկանալի իմաստով, թեւ միջավայրի հարմարցումն ինքնին ավելի հին է քան նստակյաց հողագործությունը: Արդիական դարաշարջանում՝ բնագիտության զարգացմամբ միջավայրի հետ հարաբերությունները մտնում են նոր որակական փուլ՝ հայրենի տարածքներն ընդլայնվում են՝ ազգային պետություններ ժամանակակից իմաստով, մեծ աշխարհագրական հայտնագործություններ, երկրագունդը որպես ընդհանուր տուն, տիեզերքի փորձարարական ուսումնասիրության սկիզբ եւ այլն:

**21. Մշակութային գործունեությամբ՝ անկենդան ու անշարժ թվացող «լանդշաֆտի» մեջ բացահայտում է նրա ենթակայականը, սուբյեկտիվը, ներգործունը, անհատականը՝ աշխարհագրական միավորը երկիր է դարձնում:**

Մշակույթը, որն իր սկզբունքով միջավայրի հարմարեցման, նրա մշակման, ձեւավորման փորձն է ենթակայի կողմից, դառնում է ոչ միայն ենթակայի այլև՝ երկրի մշակույթ, արտահայտում է երկիրը, կենդանացնում է այն, եւ առավել հաջողակ միության դեպքում դառնում է երկրի լանդշաֆտի կենդանի մասը, երբ, օրինակ, ճարտարապետական հուշարձանները ծուլվում են աշխարհագրական միավորներին, եւ երբ ձգտելով առավել ինքնուրույնության, մշակույթը, կարծես լեզու եւ շունչ է տալիս երկրի ուրույն դիմագծին: Միջավայրն առավել հարմարեցնողն իրեն, միաժամանակ միջավայրին առավել հարմարվածն է ինքը:

**Հավելում:** Առավել հաջողված եւ արտահայտիչ դեպքերում ենթակայի եւ միջավայրի միությունը դառնում է ակներեւ նաեւ արտաքին հայացքի համար: Այսպես Մեծ Բրիտանիան դառնում է ծովերի տիրակալ՝ հնարավորինս արտահայտելով երկրի կղզային դիրքը, թիրետում ստեղծվում է աստվածապետություն եւ հոգեւոր կենտրոնի հռչակ՝ կարծես մարմնավորելով բարձրադիր լեռնային երկրի որպես աստվածների բնակության վայր ավանդական պատկերացումը եւ այլն: Այս օրինակներում մշակույթները դառնում են աշխարհագրական միջավայրի գրեթե բառացի արտահայտում, մարմնավորում՝ միջավայրն ինքը վերածվում է ենթակայի, գործող անձի:

**Հավելում 2:** Մշակույթը բացահայտում է անշարժ ու անփոփոջ թվացող երկրի՝ աշխարհագրական միավորի ներքին շարժունակությունը: Որեւէ աշխարհագրական միավոր թվում է անփոփոխ ու հավետ՝ մանավանդ ի համեմատություն մարդկային կյանքի եւ հասարակության փոփոխականության: Իրականում, սակայն, փոփոխական են նաեւ աշխարհագրական միավորները՝ օվկիանոսները դառնում են լեռնաշխարհներ, լեռնաշխարհները՝ քայքայվելով հարթավայրեր, որոնք կարող են նորից ծածկվել ծովով, փոփոխվում են եղանակային պայմանները եւ նույնիսկ կոորդինատները՝ այսօր բեւեռային ցամաքը, երեկ կարող է ոհնեցած լինել արեադարձային տեղադրություն եւ հակառակը: Ամեն

երկիր ունի իր ուրույն բնական պատմությունը, որը չի ավարտվում, այլ շարունակելի է: Այսպես՝ Հայկական Լեռնաշխարհը շարունակում է բարձրանալ, իսկ Միջերկրական ծովը փակվում է՝ միլիոնավոր տարիներ անց դրա տեղում առաջանալու են Հիմալայների չափի բարձր լեռներ եւ այլն: Հետեւաբար աշխարհագրական միավորներն ունեն իրենց բարդ ու դրամատիկ պատմությունը, իրենց դինամիկան, հետեւաբար ներքուստ, իրենց էությամբ՝ նրանք նույնպես անհատական են, պատմական, փոփոխվող եւ զարգացող որքան մարդկային մշակույթը: Հարմարվելով միջավայրին եւ հարմարեցնելով միջավայրը, վերածելով այն հայրենիքների եւ հայրենիքներն անհատականացնելով, սուբյեկտացնելով, մարդկային հանրություններն ընդամենը բացահայտում են լանդշաֆտների այդ դինամիկ ներուժը:

## Քաղաքականություն

22. Այն կետից, երբ մշակույթը «կանում է» որոշակի տարածքի, կապվում է նրա հետ գոնե մի որոշ տեսական ժամանակով, եւ ձեւավորվում է մշակութային-տարածքային համեմատաբար կայուն միավոր, մշակույթը վերածվում է քաղաքականության:

Ենթակայի եւ միջավայրի միությունը ձգտում է ձեւակերպվել որպես ինքնություն, որի ներքին միտումը ինքնիշխանության հաստատումն է: Ենթակայի գործունեությամբ մշակված եւ իր ներուժը բացահայտած երկիրը ձգտում է վերածվել ինքնամփոփ, ինքնաբավ՝ ինքն իր մեջ եւ իր համար միակ եւ որույն աշխարհի:

Հավելում 1. Աշխարհ բառի ստուգաբանությունը կապված է իշխել բառի հետ, եւ աշխարհ ի սկզբանե նշանակում է իշխանություն: Այսինքն՝ բառի մեջ ի սկզբանե ներդրված է ինքնիշխանության իմաստը:

Հավելում 2: Քաղաքականը կարելի է սահմանել եւ քննել տարբեր դիտակետերից: Տվյալ դեպքում վերցրել ենք դիտակետերից մեկը, որը սակայն, չի կարող սպառել քաղաքականի ողջ տարողությունը:

23. Մշակույթն ու քաղաքականությունը, «հոգեւորն» եւ «իրականությունը» ոչ թե իրար հակադիր կան միմյանց նկատմամբ անտարբեր երեւույթներ են, այլ միեւնույն ուժի, միեւնույն հոգու դրսեւորումներն են:

Մշակույթն ու քաղաքականությունը ենթակայի դիմադրողականությունն են՝ ուղղված մի կողմով դեպի ներս՝ սեփական միջավայրին հարմարում եւ դրա հարմարեցում, ներքին ինքնակազմակերպում, միասնության պահպանում եւ միաժամանակ բազմատարրության՝ ձկունության ապահովում, մյուս կողմով՝ դեպի դուրս պաշտպանություն եւ ծավալում, համագործակցություն եւ մրցակցություն, խաղաղություն եւ պատերազմ:

Այս համակարգում չկա առանձին մշակույթ եւ առանձին քաղաքականություն, այլ երկուսը լիարժեքորեն նույնն են՝ իրապես ինքնուրույն, ոչ դեկորատիվ մշակույթը քաղաքականություն է, իսկ քաղաքականությունը՝ մշակույթ, միջավայրի մշակում՝ ձեւավորում, պահպանում եւ զարգացում:

Քաղաքականությունը նույնքան հոգեւոր է որքան մշակույթը, եւ մշակույթը նույնքան իրական, գործնական որքան քաղաքականությունը: Հոգեւորը ոչ թե պարզապես քաղաքականության գործերից մեկն է, այլ քաղաքականության առաջնային գործը, եւ հակառակը՝ անկախ քաղաքական համակարգը ոչ թե մշակույթին պարզապես նպաստող հանգամանքներից մեկն է, այլ մշակույթի առանցքային ներքին ձգտումն ու նպատակը, նրա բարձրագույն դրսեւորումը:

**Հոգին ուժ է, իրականություն, գործ եւ նյութ,** եւ ոչ երբեք ազատ սավառնող, անարյուն ուրվական՝ թուլության եւ դրադ քաշվածության մարմնավորում:

**24. Քաղաքականության խնդիրն անկախությունն է:** Չկա քաղաքականություն առանց անկախության խնդրի, եւ չկա անկախություն քաղաքական ձեւակերպումից դուրս: Անկախությունը ենթակայի ինքնահաստատման, ուժի բացահայտման, ինքնաբավ աշխարհի ստեղծման եւ ծավալման ձգտման անվանումն է եւ մարմնավորումն է:

Անկախությունը ոչ թե միանգամյա գործողություն է, ոչ թե իրավական կարգավիճակ, այլ շարունակական գործընթաց, գործունեություն, որի ծավալումն ըստ էության սահմաններ չունի: Անկախությունն աննդատ հաստատվում է, ենթադրում է անընդատ պայքար, ջանք, ուժի ծախս եւ շարունակականություն: Այն չի կարող դոփել տեղում, այլ կամ ծավալվում է, կամ պակասում:

**25. Քաղաքականությունը մշակույթի բարձրագույն դրսեւորումն է, մշակութային առավելագույն գործողությունը:** Եթե մշակույթն ինքնին դիմադրություն է (տե՛ս վերը), ապա քաղաքականությունն այդ դիմադրության գագաթն է, կենտրոնացումը, ուժգնացումը: Քաղաքականությունը դիմադրություն է որպէս այդպիսին, մշակույթի մաքուր ուժը, մշակութային ոգու կատարելիությունը:

Հավելում: Իհարկէ խոսքը «քաղաքական գործիչների» «քաղաքականության» մասին չէ, որի խնդիրն է աղջկա պէս որսալն է այս կամ այն խմբի նախասիրությունները, եւ փորձել դրանք «արտահայտել»՝ դուր գալու եւ ընտրվելու՝ ամուսնանալու կամ հաճելի ժամանց անցկացնելու համար: Ոչ էլ կառավարման վարչարարության մասին է, այլ թագավորական այն արսվեստի մասին, որը ձեւավորում է աշխարհներ, ճակատագրեր եւ պատմություններ՝ դարերի համար, եւ որը ոչ թե ծառայում է ինչ որ մեկին, այլ թագավորում է՝ ինքնիշխան, ինքնաբավ եւ Աստծո կամոք:

**26. Անկախության հաստատումն ունի ներքին եւ արտաքին չափում:** Ներքին չափումը «աշխարհի»՝ ինքնության, դրա բովանդակության ստեղծումն ու կամզմակերպումն է՝ մշակույթ նեղ իմաստով, կառույցներ, ավանդույթներ, որոնք պետք է մարմնավորումն ու արտահայտումը դառնան տվյալ ենթակայի եւ միջավայրի միության, միաժամանակ դրա պահապանը, փոխանցողը եւ զարգացնողը՝ բացահայտողն ու ծավալողը:

Ներքին քաղաքականության գերնպատակն է՝ լիարժեք ինքնաբավ աշխարհի ստեղծումը, որից դուրս չկա այլ աշխարհ, եւ որն ինքն իր համար ամեն ինչն է՝ «մենք ենք, մեր սարերը», բայց ոչ թե գավառական ինքնամեկուսացման, այլ ինանամփոփ, ինքնիշխան՝ ամեն ինչ իր մեջ ընդգրկող եւ յուրացնող, ինքն իր համար աշխարհի, ինքն իր համար տիեզերքի հանգստության իմաստով: **Սա ներքին քաղաքականության բացարձակության մղումն է, որը մշտապես կայանում է, բայց չի կատարվում՝ բախվելով այլ «աշխարհների» սահմաններին եւ չկարողանալով վերացնել դրանք:**

Հավելում: Մարդկության միասնությունը գոյություն ունի ոչ թե ինքն իրենով, անմիջապէս, այլ միայն որպէս առանձին «աշխարհների», ինքնությունների, ազգերի բարդ, միջնորդավորված միասնություն: Խուսափելու համար այստեղ բարդ եւ անպտուղ վեճերից, ազգ բառն օգտագործում ենք իր ամենա նախնական իմաստով որպէս՝ ճյուղ, այսինքն՝ բաժանում, հատված, ճյուղավորում: Նկատի ունենք, որ մարդկությունը՝ ընդհանրությունը ողջ իր

պատմության ընթացքում ներկայանում է ոչ թե որպես անմիջականորեն միասնական ենթակա, այլ բաժանված առանձին ճյուղերի՝ ցեղեր, պետություններ, ազգեր եւ այլ խմբեր: Համամարդկային մշակույթը ստեղծվում է ազգերի կողմից, եւ առավել շեշտված եւ ընդունված համամարդկային արժեքները միաժամանակ առավել շեշտված ազգային-անհատական են:

Ինչպես ցանկացած մոնոպոլի՝ եզակիի դեպքում (տես Հեգելի «Տրամաբանությունը») ազգերը մի կողմից բացարձակ տարբեր են միմյանց նկատմամբ՝ ամեն ճյուղավորում ձգտում է իրեն հաստատել որպես ինքնամփոփ, ինքնարժեք, ինքնիշխան, նաեւ՝ տարբեր, յուրահատուկ, անհատական միավոր, մյուս կողմից՝ հենց այդ ձգտմամբ ազգերը նույնական են, եւ նրանց միջեւ տարբերությունն ու սահմանը՝ «պատրանքային», համահավասարեցնող:

Ազգերը մրցակից են միմյանց, եւ նրանց մրցակցությունն է համաշխարհային պատմությունը, եւ այդ մրցակցության մեջ նրանք գործում են որպես հակադիրներ եւ հակառակորդներ, մյուս կողմից հենց մրցակցությունը հնարավոր է միայն նմանների եւ նույնների միջեւ՝ հանուն հաղթանակի նույն խաղում: Ազգերի շահերն ըստ սահմանման հակադիր են միմյանց, եւ մյուս կողմից բոլոր ազգերն ունեն նույն շահը՝ լինել ինքնիշխան եւ անկախ, հաստատել իրենց ինքնությունն ու անհատականությունը: Ազգերն իրար հակառակորդ են եւ դաշնակից, թշնամի են եւ եղբայր:

Ունիվերսալիզմի միտումը ներդրված է ամեն առանձին ազգի մեջ՝ ամեն առանձին միավոր ձգտում է լինել ինքն իր աշխարհը, միակ աշխարհը, ընդհանրապես՝ միակը: Դեպի ներս ուղած այդ միտումը ազգային ինքնակազմակերպումն է, իսկ ուղված դեպի դուրս այդ նույն միտումը դառնում է անընդատ ծավալման, սահմանների վերացման, մյուսների ծուլման ձգտում: Առավել հաջողվածներն այս ուղու վրա միավորում են ընդարձակ տարածություններ եւ հռչակում են իրենց «աշխարհ» եւ «խաղաղության» հաստատող՝ ազդարարելով ազգային մրցակցության ավարտը:

Ամեն տվյալ պատմական փուլի «աշխարհը», «քաղաքակիրթը», «համամարդկայինը», որի անունից խոսում են եւ որի անվամբ օրինականացնում են՝ մի որեւէ մեծապետական ազգի «աշխարհն է», որը հասնելով ծավալման բարձրակետի իրեն հռչակում է վերազգային, միջազգային, զուտ մարդկային, հայտարարում է պայքար ազգայինի՝ «հեթանոսականի» դեմ որպես հետամնաց, որպես բարբարոս եւ վայրենի, որպես պատերազմի եւ ատելության աղբյուր: Ազգային «հեթանոսության» դեմ պայքարը՝ միշտ պայքար է հանուն աշխարհակալության աստիճանի հասած ազգայինի գերիշխանության: Սակայն, երբ մեծ միավորումներն անկում են ապրում, նրանց փալատակներում նորից ձեւավորվում են նոր ճյուղավորումները, եւ ազգային մրցակցության պատմությունը վերսկսվում է:

27. Անկախության արտաքին չափումը հարաբերություններն են այլ ենթակաների եւ միջավայրերի՝ «աշխարհների» հետ: **Համաշխարհային պատմությունը ոչ թե մեկ միասնական, այլ բազմաթիվ ենթակաների եւ միջավայրերի՝ ինքնությունների, ինքնիշխան աշխարհների պատմություն է:** Նրա համամարդկային բնույթը երբեք չի արտահայտվում անմիջապես որպես մեկ ենթակայի պատմություն, այլ մշտապես որպես բազումների պատմության բարդ, միջնորդավորված միասնություն: Այս իմաստով **համաշխարհային պատմությունը ոչ թե միաստված է, այլ բազմաստված, ոչ թե միասկզբունք է, այլ բազմասկբունք:**

28. Անկախության համար պայքարը որպես քաղաքականության հիմնական նպատակ էությամբ նույնն է բոլոր չափերի, ձեւերի, բոլոր ժամանակների եւ տարածքների համար, սակայն, տարբեր կարող են լինել նրա դրսեւորումները, բովանդակությունն ու կառուցվածքը: Հանուն անկախության պայքարն անընդատ եւ անվերջ գործընթացն է, որը սկսվելով հանուն ինքնավարության պայքարից իր անվերջ ծավալման մեջ կարող է հասնել պայքարի հանուն

աշխարհակալության՝ հաստատման կամ հաստատվածի պահպանման: **Ամենափոքր ենթակայի պայքարը հանուն նվազագույն ինքնուրույնության եւ ամենա մեծ ու գերիշխողի պայքարը հանուն իր գերիշխանության պահպանման կամ ծավալման՝ էությանը միեւնույնն են:**

**Հավելում:** Այստեղ նորից, թեկուզ եւ հավանաբար՝ անհույս, պետք է հիշեցնենք, որ ոչ թե գնահատում ենք կամ ասում ենք ինչպես պետք է լինի, այլ ընդամենը փորձում ենք նկարագրել իրականությունն այնպիսին ինչպիսին դա կա՝ մեր տեսածով: Մենք քաջ ծանոթ ենք բոլոր դասագրքային ճշմարտությունների, եւ նույնիսկ ժամանակին կարդացել ենք «ինչն է լավ եւ ինչն է վատ» մանկական բանաստեղծությունը:

29. Բացարձակ անկախությունը բացարձակ ինքնաբավությունն է, բացարձակ ինքնամփոփ աշխարհի ստեղծումն է՝ նպատակ, որը հասանելի չէ նույնիսկ համաշխարհային գերտերության կարգավիճակում: Դրա համար անկախության ծավալումն անվերջ է եւ սահմաններ չունի: Այսպես ամենամեծից մինչեւ ամենափոքր ձեւակերպում են քաղաքականությունը որպես անկախության պահանջ, ամրապնդան կամ զարգացման խնդիր՝ համապատասխան իրենց չափի:

30. **Այս համակարգում չկա ուժ եւ թուլություն, այլ կան տարբեր չափի, տարբեր մեծության ուժեր:** Ամեն բան ինչ կա, ինչ կենդանի է, եւ մանավանդ ամեն ենթակա ինքնին, իր գոյության փաստով իսկ՝ ուժ է, ուժի դրսեւորում է: Դա նշանակում է, որ նա գոյություն ունի եւ կարող է ունենալ միայն ուժի ծախսով, այսինքն՝ անընդատ դիմադրությամբ: Պարզ գոյությունն իսկ ենթադրում է ուժի պաշար, որը պետք է ծախսվի, եւ որը պետք է անընդատ նորից կուտակվի՝ նոր ծախսի համար: Դրա համար չկա թույլ գոյություն, թույլ ենթակա, ցանկացած գոյություն եւ ենթակա ինքնին ուժ է: Ուժը չի կարող կոնսերվացվել կամ դուրս տեղում՝ այն կամ պետք է ավելանա կամ պակասի:

**Հավելում:** Առավել մեծն ու խոշորն անպայման չի նշանակում առավել ուժեղ՝ կենսունակության իմաստով: Առավել խոշոր միավորները միժամանակ խոցելիներն են ձգնաժամային, անցումային փուլերում: Բնական պատմությունը վկայում է, որ կենդանատեսակների մեծ վերացումների ժամանակ առաջին հերթին վերանում են առավել մեծ, հաջողակ եւ ուժեղ տեսակները: Միաժամանակ՝ մեծ վերացումներից հետո, կենսական բազմազառությունը վերականգնվում է իրենց գոյությունը աղետի ժամանակ պահպանած առավել թույլերի եւ աննշանների հիմամբ: Այսպես, դինոզավրերի վերացմամբ, նոր կենսական բազմազանությունը գոյացավ մինչ այդ տասնյակ միլիոնավոր տարիներ գիշերային փոքրիկ՝ մկան չափ կենդանիների կյանք վարող կաթնասունների հիմամբ՝ փիղը, առյուծը, մարդը ու բոլոր մյուսներն առաջացած այդ փոքր ու արհամարելի մկնիկից: Բայց ի հիշողություն երբեմնի լուսանցքային եւ «վտարանդի» կյանքի բոլոր կաթնասունները պահպանեցին գիշերային կենդանուն բնորոշ գծեր, օրինակ՝ գունային աղքատիկ տեսողությունը կամ սուր հոտառությունը: Մյուս կողմից, իրենց ժամանակին նույն դինոզավրերը ծագեցին եւ զարգացան նույն տիպի լուսանցքային, պարզունակ եւ փոքր մի տեսակից՝ այն բանից հետո երբ անհետացան Պալեոգոյի մեծ ցամաքային տեսակները՝ սինապսիդները, իսկ սինապսիդների մնացորդերը դինոզավրերի էպոխայում հենց փոքրիկ մկանման կաթնասուններն էին: Այնպես, որ կաթնասունների ներկա հաղթանակն ընդամենը ռեվանշ է անցյալի մի մեծ պարտության: Այնպես որ պետք է ուշադիր լինել կյանքի, նաեւ պատմության ամեն տվյալ պահի առավել աննշան, գորշ ու լուսանցքային թվացող ձեւերին, որովհետեւ նրանց է ռեանշը, արքայությունը եւ գորությունը հավիտենության մեջ:

**31. Անկախություն հռչակողը մտնում է համաշխարհային խաղի մեջ:** Անկախ իր մեծությունից, նա այդ պահից համարվում է խաղացող: Խաղի մեջ մտնել նշանակում է իրավունքներ ստանալ եւ պատասխանատվություն ստանձնել, ճանաչվել «չափահաս»:

Խաղը քայլերի անընդատ փոխանակում է, պաշտպանություն եւ գրոհ, հաղթանակի ձգտում, պարտության ռիսկ, բարձր դրույքներ, նոր նպատակադրումներ՝ հների իրականացումից հետո:

**Համաշխարհային պատմությունը համաշխարհային խաղն է՝ ուժի եւ թուլության չափումը, ուժային փոխգործակցությունը:**

32. Խաղի մեջ մտնողը պետք է իմանա, որ հնարավոր չէ խաղալ՝ առանց համարձակության որոշակի չափի, հնարավոր չէ ձգտել հաջողության՝ առանց ձախողման որոշակի վտանգի ընդունման, հնարավոր չէ 100 տոկոսանոց ապահով, երաշխավորված խաղ, եւ չկա վերջնական հաղթանակ՝ մինչեւ խաղի ավարտ, բայց խաղի ավարտն էլ նշանակում է նոր խաղի սկիզբ:

Իրեն անկախ, այսինքն՝ խաղացող հռչակածը պետք է գիտակցի, որ իր նկատմամբ չի լինելու խնայողական մոտեցում, որ պարտված խաղացողի նկատմամբ անողոք են, բայց որ նաեւ չխաղացողը դտապարտված է ավելի արագ կործանման:

33. Խաղի մեջ մտնողը պետք է խաղա, այսինքն՝ նա չի կարող մի քիչ խաղալ ու «դրաղ քաշվել», չի կարող կամայաբար լքել խաղը, չի կարող կամայական դադար վերցնել, «հանգիստ ապրել», «լուծել բոլոր խնդիրները», հրաժարվել կռվից: Խաղի մեջ գործում է՝ կպել ես, խաղա սկզբունքը: Խաղը չի կարող լինել նաեւ զուտ պաշտպանողական կամ զուտ հարձակվողական: Խաղը ենթադրում է հաղթանակը որպես նպատակ՝ միայն պաշտպանելով կամ միայն պահպանելով հնարավոր չէ հասնել խաղի նպատակին, ինչպես նաեւ միայն գրոհելով կամ առանց անհրաժեշտ պահին նահանջների: Պաշտպանվողը գրոհում է, իսկ գրոհողը պաշտպանվում է, եւ կենդանի խաղի մեջ երկու մարտավարությունների միջեւ եղած տարբերությունը զուտ անվանական է, գոյություն չունեցող՝ կա մեկ խաղ, որի անբաժան մասն են պաշտպանությունն ու գրոհը, պահպանումն ու զարգացումը, սեփական տարածքի ապահովումն ու դրա ծավալումը, առաջխաղացումն ու հանանջը:

34. Անկախություն հռչակելը ոչ միայն տվյալ երկրի քաղաքական անկախության հռչակման իրավական գործողությունն է, այլեւ դրան նախորդող եւ հաջորդող մշակութային եւ քաղաքական բոլոր գործողությունները, որոնց նպատակն է ինքնության ամրապնդումը, զարգացումը եւ պահպանումը: Այստեղ չկա զուտ մշակութային, ապաքաղաքական գործողություն: Այսպես կոչված բարձր մշակույթի ստեղծումը որեւէ ըստ ձեւի ոչ անկախ ենթակայի կողմից՝ գիր, լեզու, գրականություն, արվեստ եւ այլն ինքնին անկախության հայտ է, քաղաքական հավակնություն է, եւ հաճախ էլ հենց ուղղակիորեն դիտվում է որպես դիմադրություն ենթակայի եւ նրա շրջապատի կողմից: Մշակութային ինքնուրույն համակարգեր զարգացնող հանրությունն առնվազն խաղացողի հավակնորդ է իրեն հռչակում, եթե ոչ բուն խաղացող: Նա հաճախ արժանանում

է համապատասխան արձագանքի, երբ գերակա ուժերից հարվածներ է ստանում իր մշակութային համակարգերի նկատմամբ: Սրանք մեկնաբանվում են որպես փոքրի հալածանք, բայց դրանք ըստ էության համարժեք հարվածներ են, որով մեծ խաղացողը փորձում է հայտ ներկայացնողի ուժը, դիմադրողականությունը:

35. Անկախությունից հրաժարումն ունի իր անկեղծության չափանիշները: Անկախությունից, այսինքն՝ խաղից անկեղծորեն հրաժարվածը պետք է հրաժարվի ոչ միայն քաղաքական-իրավական անկախությունից, այլև դրա հայտը ներկայացնող դա նախապատրաստող կամ դա զարգացնող, ամրապնդող, ծավալող «բարձր մշակույթից»: Եթե դա տեղի չի ունենում, հրաժարումը կասկածներ է հարուցում գերակայող ուժերի մոտ: Այդ կասկածներն անհմիմն չեն՝ օրինակ, անկախության չհավակնող ազգի ինչի՞ն է պետք ինքնության այնպիսի ուժեղ շեշտադրումներ, ինչպիսիք են սեփական այբուբենը, նույնիսկ կետադրությունը, գրական լեզուն, սեփական ճարտարապետական ոճը եւ այլն: Դրանք ավելորդ շռայլություն են, պապերից ժառանգած ոսկե պատարաքաղներ են հասարակ ծառայողի տան մեջ: Հովանավորյալ, ոչ խաղացող ազգի համար հանդուրժելի են, «օրինական են» միայն մշակութային «անմեղ» դրսեւորումները՝ ազգագրական երանգավորումը (կոլորիտը), համով ուտելիքը, հնաոճ համն ու հոտը, թանգարանային տրեխ-տարազը, տարրաշխարհիկը (էքզոտիկը) այն ամենը ինչ այլեւս զարգացնելու չէ, կենդանի չէ, միայն պահպանման ենթակա է, այն էլ ոչ թե իրական կյանքում, այլ թանգարանային հատուկ պահպանմամբ կամ էլ տուրիստներին զվաճրացնելու տեղերում: Խաղից դուրս եկած երկրին պետք չէ ակտուալ, այս պահին ստեղծվող մշակույթ եւ դրան սպասարկող գործիքներ՝ արդեն թվարկած գիր-գրականությունը եւ այլն:

36. Ինքնությունը չի կարող ստեղծվել, ամրապնդվել, շեշտվել հենց այնպես: Ինքնության ստեղծագործումը չի կարող կանգ առնել կամայական տեղում: **Ինքնությունը կամ անընդատ զարգանում է, ծավալվում է կամ անկում է ապրում:** Ինքնության կառուցման քայլերը բխում են մեկը մյուսից, եւ կառուցման գործընթացում չկա առանձին մշակութային եւ առանձին քաղաքական բաղադրամաս: Այբուբենի ստեղծումը նույնքան քաղաքական է իր էությամբ եւ քաղաքականության հետեւանք է, որքան քաղաքականությունը կամ պատերազմը՝ արվեստ են եւ մշակույթ: Այբուբեն ստեղծածը, կամ գրական սեռեր զարգացնողը կամ գրական լեզու մշակողը խաբում է իրեն, եթե կարծում է, թե զբաղված է զուտ խաղաղ գործունեությամբ: Նա դրանով իսկ ոչ միայն դիմադրում եւ պայքարում է, ոչ միայն հայտ է ներկայացնում քաղաքական անկախության, այլև վաղն այդ անկախությունից բխող ռազմական գործողություններն է սկսում՝ անհայտ ավարտով՝ հաղթանակ կամ պարտություն: Եվ ոչ միայն զուտ պաշտպանողական պատերազմներ, այլև սեփական տարածքները լայնացնող, հարձակվողական:

37. Չկա զուտ պաշտպանություն, ինչպես չկա զուտ պահպանում, այլ կա միայն պահանում զարգացման հետ զուգակցված: Ինքնության ծավալումն ունի եւ

ներքին՝ որակական, եւ արտաքին՝ քանակական, սահմանների լայնացման, մշակույթի տարածման, գերիշխանության հաստատմամբ չափում, եւ երկուսն իրար հետ կապի մեջ: **Միեւնույն հոգին մի ձեռքով ստեղծում է բարձրագույն արժեքներ, մյուսով՝ նվաճում աշխարհներ,** դրանք տարբեր հոգիներ չեն, առավել եւս իրար հակադիր չեն, այլ հարազատ, մի արգանդից դուրս եկած երկրվորյակներ:

*(Խմբագրության կողմից)*

*.....Այստեղ ձեռագիրն անսպասելիորեն ընդհատվում է՝ թողնելով ընթերցողին մի փոքր շփոթի մեջ: Մեր փորձերը վերականգնելու ձեռագրի մնացած մասերը որեւէ դրական արդյունք առայժմ չունեցան: Կա տեսակետ, որ սա ներածական հատված է եղել մի մեծ գրքի, որը հեղինակը չի հասցել ավարտել իր վերջնական խելահեղությունից առաջ:*

*Նկարների մասին*

Հոդվածի հետ հրապարակում ենք նկարները, որոնք նախատեսել է ինքը հեղինակը: Դրանք առաջին հայացքից որեւէ կապ չունեն բուն շարադրանքի հետ: Սակայն հեղինակային արխիվում գտնում ենք, մի գրառում, որը, թերեւս, որոշ չափով բացատրություն է տալիս:

«Մարդիկ մտածում են, որ ազգայնականությունը սեփական ազգին մեծարելն է, եւ մյուսներից բարձր դնասելն է, կամ գավառական մեկուսացումն է: Մինչ իրականությունը ճիշտ հակառակն է՝ ես ազգայնական եմ, որովհետեւ սիրում եմ ոչ թե մեկ ազգ միայն՝ իմը, այլ սիրում եմ ազգերը, ազգ երեւոյթն ինքնին, որը դրսեւորվում է աշխարհի մշակութային բազմազանությամբ: Ազգայնականը սիրում է աշխարհն իր ամբողջությամ մեջ, այլ ոչ միայն նայում է «զարգացած» ազգերին, ինչպես դա սովորաբար անում են «կոսմոպոլիտները»: Ազգայնականը սիրում է աշխարհն իր նյութականության մեջ, կոնկրետության մեջ, իսկ այդպիսի աշխարհը միշտ ազգային եւ միշտ բազմազգ է, բազմաձյուղ է: Ազգայնականությունն իրական բացությունն է աշխարհի նկատմամբ՝ ոչ միայն աշխարհի ուժեղների, այլեւ **աշխարհի խոնարհների նկատմամբ, որոնք աշխարհի լուռ մեծամասնությունն են:** Սերն է ոչ միայն հաջողակների ու հաղթածների, այլեւ՝ պարտվածների ու ձախողվածների նկատմամբ: Սերն է նրանց նկատմամբ, ում պայքարները դաժան են, իսկ հույսերը՝ գրոյական, նրանց, ով չունի բարձր խոսափողներ իր տառապանքի մասին պատմելու»: